

ԱՄԵՆ. Ա. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ՇՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Բ Ե Թ Ղ Ե Հ Է Մ Ի Ս Ո Ւ Ր Բ Ա Յ Ր Է Ն

**ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՅՈՑ ՈՐ ՅԵՐՈՒՍԱՂԵՄ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ**

Կեցած մեր Տիրոջ Շննդեան սրբարանին մէջ, որուն հաւատքը խան դարերէ ի վեր կը լեցնէ մեր հոգին, յանուն Արքոց Յակոբեանց Միաբանութեան ժեզի կը փոխանցեմ նորէն այս գիշեր, ժողովուրդ Հայոց, Յիսուսի Շննդեան և Աստուածայայտնութեան ժաղցը աւետիսը:

Այս գիշեր նորէն բաց է երկինքը եւ նառագայթ ուղիներով հրեշտակները երկիր կ'իջնեն, աւետելու թանին ծնունդը որ աշխարհ կուզայ ոչ միայն մեր մեղքերու բառութեանը համար, այլ որպէսզի ցնծայ աշխարհը այս գալուստով, որ երազն է եղած դարերակ մեր ամբողջ էռութեանը, կարօտն ու պապակը մարդկութեան, այն բաղցրազին բանը որ արեւու կարդիէն մինչեւ երջանկութեան տրոփը կ'երկարաձգուի եւ որ Հայ Եկեղեցւոյ մեծ աղօրոդի շրբներուն՝ կը վերածուի սրտազին աղերսանքի մը, պաղատելով որ փարատին մէզն ու մառախուլը. չքանան շարիքն ու յուսահատութիւնը, տարագրուին տազնան ու տիսրութիւնը աշխարհի երեսէն եւ մարդոց սիրտերէն եւ վերտոնին արձագանգէ մեծ գիշերը լիցնող հրեշտակներու աւետաւոր ձայնը. «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Նորէն կը հենչեն զանգերը թերդեհեմի, խոր ու բրբուն, հոգիներու անդոնին վրայ կարդի կարդի կինող, զերմ ու աներերային, եւ հոգիները նառագայթ առ նառագայթ կը վազն իրենց առազանին, երկիրն ու երկինքը լիցնող խորհուրդին:

Մեր Տիրոջ Շնունդը, սրտառուչ եւ գեղեցիկ դրուագ մը չէ միայն, մին աննոցմէ՛ որոնի յանախ յուզիչ եւ մեծ յիշատակներով կը հարստացնեն կեանքը, այլ սկիզբը նոր կարգի մը՝ մարդկային պատմութեան մէջ:

Մարդուն կեանքը շնորհիւ այդ Յայտնութեան նոր նշանակութիւն կ'ստանար, Աստուած կը մասնակցէր մարդկային պատմութեան, ու կը լիցուէր բացը որ կար հոգիին ու մարմնին, երկրին ու երկնքին միջեւ:

Յիսուսի Շնունդը, մարդուն եւ Աստուծու երջանիկ հանդիպման տօնն է, ոսկի օգակը երկնքի եւ երկրի: Մանուկը որ կուզար իրեն իրեր օրօրոց ընտրելու բովանդակ աշխարհը, մարմնացած Սէրս էր, աշխարհը տաքցնող հոգին, որ կը բանար երկնքին սիրտը եւ մարդուն արգանդը, սփանչելի եւ նոր խորհուրդով մը:

Առանց այս վերնաշխարհին եկած լոյսին ու երազին, մարդը կեանիքի այս ժառանի մէջ հարկադրաբար պիտի իյնար լուծում-էրու ամենէն յոռեգոյնին, յուսահատ ու սեւ, եւ պիտի մտնէր շարքին մէջ հաստ ու մուր իրերուն, որոնք կեանիքի ստորին սանդխամատը կը կազմեն:

Աշխարհ պիտք ուներ այդ հոգիին, այս գիշեր մարտին առնդ այդ Սուրբ Հոգիին, որ կրակի պիտի վերածէր մեր կար, պղտոր ու գումաս մեր խորհուրդներուն պարզեւելու ստեղծումի սուրբ երաշքը: Հոգին որ չի զար մեզի այս աշխարհի ուժերէն, որ յաւերժական ժայթքն ու թխումն է լոյսի եւ սիրոյ, որ մեզի կը բերէ հաւաստիքը որ մարդուն տրուած է այլեւս իր կեանիքը այլակերպելու, պայծառակերպելու աստուածայինին մէջ եւ զայն տանինու յաւերժին:

Գիտեմ թէ դուն կը հաւատաս, ժողովուրդ Հայոց, հաւատացեր ես միշտ արդարութեան, սիրոյ, խաղաղութեան եւ անոնց փրկարար ու անկորնչելի փառքին: Քու պատմութիւնդ արևագեղ ու հսկայամարտ ժերուածն է այդ խոյանիքին: Դարեր շարունակ արիւն եւ երազ, արդարութեան եւ խաղաղութեան ծարաւը, իրեւ սրտայոյզ պատզամներ շողացին վառ ի վառ քու զաւակներուդ ողբերգութեանը վրայ: Բայց դուն կրցար պահել քու հաւատիդ, որովհետեւ գիտցար հաւատալ Բերդեհեմի խորհուրդին եւ ամէն տարի Մանկացեալ Աստուծոյ հետ կրցար մայրացնել քու հոգիդ:

Ինչ փոյք զառանցանիքը մարդերու, շառաչիւնը կործանումներու, պաշտամունիք ուժին եւ մամոննային: Մենք կը հաւատանի որ իր տիեզերական սէրը ցանուած մարդոց հոգիներուն մէջ, կ'անի ու կը մեծնայ ամէն օր, ըլլալու հսկայ ծառը եղբայրութեան, իր նիւղերուն ներքեւ առնելու ամբողջ մարդկութիւնը, համաձայն իր պատզամին:

Ժողովուրդ Հայոց որ ի սիմուս աշխարհի, նուիրական այս գիշերով, կեցած նորէն Սուրբ Ծննդեան վեհապայրին մէջ, ժեզի կը փոխանցեմ աւետիսը, որուն հաւատէք խան դարերէ ի վեր կը լեցնէ եւ կը զօրացնէ մեր քրիստոնէական կեանիքը: Աւետիսը, զոր օր մը հովիւներն ու հրեշտակները տուին աշխարհին, տակաւին կ'արձագանգէ կարծես այս սրբազն Այրին խորը: Զայն ժեզի կը բաշխեմ նոյնութեամբ իրրեւ Տիրոջ արիւնով քարտախուած նոշխարը: առ եւ պահէ իրրեւ սպեզանի ժաղցրութեան եւ պատզամ միխթարութեան բովանդակ կեանիքդ համար: Շարունակէ հաւատալ յաւերժին, Յիսուսի Ծննդեան եւ մարդուն աստուածացումին, եւ մայրացուր հոգիդ այս գիշերուան մեծ խորհուրդովը, նման քու պապերուդ՝ որոնք դարեր շարունակ կաւէն ու հողէն վարդեր հանեցին, զեղումի բերելով գիշերները, բանալով դուռները երկնիքին, իշեցնելու Աստուծոյ Որդին իրենց սիրտերուն մէջ եւ Մասուրի գաղջ ընտանութեան: